

ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Դեկտեմբեր 2023

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Կաղանդը ամենին շատ սիրուած տօներէն մէկն է: Կաղանդ Պապան իր նուէրներով կ'ուրախացնէ մանաւանդ փոքրերը: Հայկական սովորութիւն է, որ Կաղանդին ընտանիքի անդամները համախմբուին ճաշի սեղանին շուրջ. խմեն կենացներ եւ երգ ու պարով անցընեն ժամանակը մինչեւ ուշ գիշեր. յետոյ աղօթքով դիմաւորեն Նոր Տարին: Սակայն նոյնը չէ այս տարի, որովհետեւ 2023-ը դիւրին տարի մը չեղաւ մեր ազգին համար: Անցեալ տարուան Դեկտեմբերէն մինչեւ այս տարուան Սեպտեմբերի 20-ը, Արցախի ժողովուրդը մնաց շրջափակուած: Արցախցիներ կար ամիսներ առանց ուտելիքի, առանց դեղերու, առանց լոյսի եւ առանց կազի մնալէ ետք, բռնի տեղահանուեցաւ:



Եկէք մտածենք ու ձեւեր գտնենք օգնելու արցախցի մեր հայրենակիցներուն եւ հայ ազատամարտիկներու ընտանիքներուն: Այդ օգնութիւնը կրնանք ընել զանազան ձեւերով. օրինակի համար՝ Առաջին՝ կարճ ժամանակի մէջ, դրամահաւաքներուն եւ ցոյցերուն մեր մասնակցութիւնը բերելով կամ քաջալերական տողերով նամակներ գրելով: «Հորիզոն Մանկապատանեկան»ի խմբագրական կազմը պատրաստ է ձեր նամակները հրատարակելու: Երկրորդ՝ (մեր օգնութիւնը կրնանք բերել) երկար ժամանակի վրայ, երբ շատ լրագրողներ ու շատ քաղաքագէտներ ունենանք: Օտար թերթերու մէջ աշխատելով, օտար քաղաքագէտներու հետ գործելով եւ հայ դատը հետապնդելով հետաքրքրուինք: Եկէք ըլլանք լաւատես եւ յոյսը միշտ վառ պահենք մեր մէջ: Հազարամեայ մեր պատմութեան ընթացքին, մենք սորված ենք յաղթահարել մեր դժուարութիւնները: Այս անգամ եւս, մեր արթուն միտքով եւ մեր աշխատասիրութեամբ կը գտնենք միջոցներ՝ տէրը ըլլալու մեր հայրենի հողին եւ մեր բոլոր իրաւունքներուն:

Բարի Կաղանդ եւ բարի Նոր Տարի բոլորին:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ



ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

Բուն անունով՝ Մուշեղ Ճէնտերեճեան: Ծնած է 1913-ին, Անգարայի Սիվրի-Հիսար գիւղաքաղաքին մէջ: Յեղասպանութեան պատճառով ինկած է քսոսրի ճամբաները եւ հասած է Սուրիա, Տէր Զօր:

Հետագային Դամասկոս հաստատուած է, ուր աւարտած է Հայոց Ազգային վարժարանը: Անցած է Կիպրոս եւ յաճախած Մելքոնեան Կրթական Հաստատութիւնը, ուսուցիչ ունենալով հայ մեծ գրող Յակոբ Օշականը: 1930-ին, փոխադրուած է Պէյրութ եւ իր ուսումը շարունակած է Պէյրութի Հայ Ճեմարանէն ներս, աշակերտելով հայ մշակոյթի նուիրեալներէն Լեւոն Շանթին եւ Նիկոլ Աղբալեանին: Աւարտած է Ճեմարանը, ապա հետեւած է Պրիւքսէլի համալսարանի մանկավարժութեան եւ գրականութեան ճիւղերուն: Վերադարձած է Պէյրութ եւ երկար տարիներ դասաւանդած է հայերէն, ըլլալով Ճեմարանի սիրուած ուսուցիչներէն մէկը:

Մուշեղ Իշխան գրած է բանաստեղծութիւններ, որոնցմէ մաս մը նշանաւոր երգիչ՝ Արթուր Մեսչեան վերածած է երգի: Այդ երգերէն են օրինակ՝ «Աշխարհի ցաւով», «Տարօինակ մարդ արարած», «Երգը խղճի», «Կը ձանձրանան» եւ այլն:

Մուշեղ Իշխան գրած է նաեւ վէպեր, վիպակներ, պատմուածքներ եւ թատերախաղեր: Ան պատրաստած է դպրոցական դասագիրքեր եւ եղած է «Բագին»ի եւ «Ազդակ» օրաթերթի խմբագիր:

Իր գրութիւններուն մէջ կ'ելեւի քսոսրուած հայու պայքարը՝ օտարացման վտանգին դէմ: Ըստ Մուշեղ Իշխանի, ամեն անհատ պէտք է ուսանի եւ բարձրագոյն ուսում ստանայ, որ նախ կարողանայ լաւ մարդ դառնալ, յետոյ՝ օգտակար ըլլայ իր ազգին:

Մահացած է Պէյրութ, 12 Յունիս 1990-ին:

ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐ ԿԱՄ ՉԻՐԵՐ



ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ

Մուշեղ Իշխանի «ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ» բանաստեղծությունն էն հատուած մը


Կաղանդ պապա,
Իմ այս նամակս առաջին
Քեզ կը գրեմ ես ահա
Եւ կարօտով կը յանձնեմ քու սուրբ աջին:

Ո՛ր ալ ըլլաս,
Պիտի անշուշտ գայն կարդաս
Եւ անհամբեր պիտի բռնես դուն կրկին
Մեր տան ծանօթ հին ուղին:

Մայրս կ'ըսէ, որ այս տարի
Քիչ մը հոգի եւ քիչ մը խելք ու շնորհ
Բերես ինձի,
Բայց չլսես դուն անոր.
Խելք ու շնորհ՝
Այնքան ունիմ որ կը բաշխեմ ես ծրի...
Կողովիդ մէջ խորհրդաւոր
Լեցուր շուտով ինձ համար
Շաքար ու միրգ ու խաղալիք անհամար:

Հայրս կ'ըսէ՝ Մասիսն է լոկ մեծ ընծան,
Որ դուն օր մը կրնաս բերել հայ տղոց,
Որուն մէջ կայ ամէն բան -
Աստղ ու լուսին ոսկեգօծ,
Կրակ ու բոց,
Հսկայ շուներ պահապան,
Շղթայակապ հին քաջեր
Եւ հրեղէն նժոյգներ...

Կաղանդ պապիկ, ես այդ Մասիսը կ'ուզեմ,
Դիր անիւներ ոտքին տակ
Ու համարձակ քշէ մեր տունը շիտակ,
Բեր ինձ նուէրն այդ վսեմ:
Օ՛, մի՛ վախնար, չեմ կոտորեր,
Չայն կը պահեմ սրտիս դէմ՝
Իբրեւ բարի հրեշտակ
Եւ գահակալ իբրեւ հզօր բռնատէր:



Չոր պտուղներուն մէջ ամէնէն անելի կ'օգտագործուին չամիչը, սեւ սալորի եւ ծիրանի չիրերը: Հայկական սովորութիւն է, որ տօնական օրերուն սեղանէն անպակաս ըլլան չոր պտուղները: Անոնցմով ոչ միայն կարելի է զարդարել սեղանը, այլ պատրաստել համեղ աղցաններ, ճաշեր եւ անուշեղէններ:

Եթէ չչարաշահենք անոնց օգտագործումը, չիրերը քաղցր ըլլալով հանդերձ, արեան մէջ չեն բարձրացներ շաքարի քանակը: Անոնք օգտակար են դէմքի մորթին, կը զօրացնեն մեր եղունգներն ու մազերը: Չիրերը կը պարունակեն մարդու մարմնին անհրաժեշտ բոլոր կենսանիւթերը (վիթամին): Այսպէս օրինակ՝

- Սալորի, ծիրանի եւ թուզի չիրերը օգտակար են աղիքներուն:
- Արմաւը՝ ուժ ու եռանդ կու տայ:
- Ծիրանի չիրը երկաթ, կրածին (calcium), ֆոսֆոր եւ այլ նիւթեր կը պարունակէ: Աղիքներէն զատ, ան օգտակար է նաեւ սրտին:
- Չամիչը մարմնին դիմադրողականութիւնը կը բարձրացնէ:

ԽՈՇԱՅ

Հայ ժողովուրդը ունի տօնական օրերու յատուկ սովորութիւններ: Կաղանդին հայ տան մէջ, մաման կամ մեծ մաման կը պատրաստեն Կաղանդի չէօրէկը: Կաղանդի անուշեղէններէն են նաեւ գաթան, անուշապուրը եւ խոշաֆը: Ահա թէ ինչպէս կը պատրաստեն խոշաֆը.



Բաղադրութիւն

- Կէս քիլօ ծիրանի խիւս (պէսթիլ)
- 4-5 գաւաթ ջուր
- Կէս գաւաթ կամ 1 գաւաթ շաքար
- 1 գաւաթ կեղուում Նուշ
- 1 գաւաթ կեղուում պիստակ
- 1 գաւաթ գինձ (սնոպար)
- 1 գաւաթ թուզ՝ կտրուած
- Կէս գաւաթ առանց կուտի կարմիր չամիչ
- Կէս գաւաթ առանց կուտի սեւ չամիչ
- 1 գաւաթ առանց կուտի սալոր՝ կտրուած
- 1 ապուրի դգալ վարդի ջուր
- 1 ապուրի դգալ ծաղիկի ջուր
- 1 ցպիկ կասիա (տարչին)

Պատրաստութիւն

- 1- Մկրատով ծիրանի խիւսը փոքր կտորներու վերածել:
- 2- Աւելցնել վրան 4-5 գաւաթ ջուր, դնել շաքարը եւ ամբողջ գիշերը ձգել, որպէսզի կակուղնայ, հալի եւ բարակ թացանի վերածուի: Խառնել, որպէսզի մնացեալ փոքր կտորներն ալ հալին:
- 3- Յաջորդ օրը ավելցնել նուշը, պիստակը, գինձը, չամիչը, սալորը եւ թուզի կտորները: Խառնել բոլորը միասին, ապա ավելցնել կասիան, վարդի ջուրը, ծաղիկի ջուրը: Գոցել վրան մինչեւ որ չոր պտուղները կակուղնան: Կարելի է ավելի ջուր ավելցնել մինչեւ որ մաժունէն անելի բարակ թանձրութիւն մը ունենայ:
- 4- Դնել պզտիկ խորունկ ամաններու մէջ եւ հիւրասիրել պաղ վիճակի մէջ:

ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿԻՆ ԾԱԳՈՒՄԸ



Կաղանդ Պապուկին կերպարը ստեղծուած է Ս. Նիկողայոս Զմիռնիացիէն ներշնչուելով: Նիկողայոս ծանօթ էր իր բարեգործութիւններով, ան աղքատ ընտանիքներու երեխաներուն նուէրի տեսքով չոր պտուղներ, տուրմ եւ հաց կը բաժնէր: Անցեալին, 6 Դեկտեմբերը ճանչցուած էր որպէս երեխաներու նուէր բաժնելու օր: Սակայն, 16-րդ դարուն, երբ սուրբերու երկրպագութիւնը արգիլուեցաւ, նուիրատուութեան օրը եղաւ 24 Դեկտեմբերը: Դարերու ընթացքին Կաղանդ Պապուկին կերպարը փոխուեցաւ: Ան դարձաւ բոլորիս ծանօթ եւ բոլորիս կողմէ սիրուած՝ կարմիր հագած, ճերմակ մազերով եւ ճերմակ մօրուքով գիրուկ ծերունին: Կաղանդ Պապան կ'ապրի Հիւսիսային բեւեռին մէջ եւ ունի յատուկ գիրք մը, ուր կը գրէ երեխաներուն լաւ եւ վատ արարքները: Ան կ'այցելէ երեխաներուն տուները եւ տօնածառին տակ կը տեղաւորէ անոնց ապսպրած խաղալիքները: Կաղանդ Պապան գաւաթ մը կաթով, կը սիրէ ուտել իրեն համար պատրաստուած կրկնեփները: Յետոյ ծխնելոյզէն վեր բարձրանալով, իր եղնիկներուն հետ կ'անցնի տունէ տուն, քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ:



ԵՂԵՆԻՆ

Կաղանդի ծառը կամ տօնածառը զարդարուած եղեւնիի ծառն է: Եղեւնիի ծառը կը պատկանի մշտադալար, ասեղնատերեւ սոճազգիներու ընտանիքին: Տարածուած է Եւրոպայի, Ասիոյ, Հիւսիսային Ամերիկայի եւ Ռուսաստանի մէջ: Աշխարհի տարածքին կան աւելի քան 40 տեսակ եղեւնիներ, որոնցմէ չորսը կ'աճին Հայաստանի մէջ:

Եղեւնիի փայտը կ'օգտագործուի շինարարութեան եւ թուղթի պատրաստութեան մէջ: Եղեւնին կեանքի խորհրդանիշ է: Ան կը խորհրդանշէ նաեւ խիզախութիւն, բարձր տրամադրութիւն, հաւատարմութիւն եւ անմահութիւն:

ԱՄԲՈՂՋԱՅՈՒՐ ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿԻՆ ՊԱՏԿԵՐԸ, ԱՊԱ ՆԵՐԿԷ:



ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

7 Դեկտեմբեր 1988-ին Հայաստանի հիւսիս-արեւմտեան մասին մէջ տեղի ունեցաւ 6,8-7,2 աստիճան ուժգնութեամբ երկրաշարժ մը: Այս վերջինը ամբողջութեամբ աւերեց Սպիտակը, Լենինականը (ներկայիս՝ Գիւմրի), Ստեփանաւանը, Կիրովականը (ներկայիս՝ Վանաձոր) եւ 342 ուրիշ գիւղեր: Երկրաշարժը պատճառեց մօտաւորապէս 25,000 զոհ եւ 31,000 վիրաւոր. աւելի քան 514,000 հայ բնակիչներ մնացին անտուն:


113 երկիրներէ մարդասիրական օգնութիւններ ուղարկուեցան Հայաստան: Վիճակը եղաւ աւելի ծանր, երբ երկրաշարժէն փրկուած մարդիկ պաղէն մեռան: 1988-ի ձմեռը չափազանց ցուրտ էր՝ -35 աստիճան:

Երկրաշարժէն տուժածներուն օգնելու նպատակով, 1989-ին, հայ նշանաւոր բեմադրիչ Հանրի Վերնէյոյ եւ հայ հանրածանօթ երգիչ Շառլ Ազնաւուր կը յաջողին համախմբել 90 ֆրանսացի երգիչներ եւ դերասաններ: Անոնք միասնաբար կը ձայնագրեն «Pour toi Arménie» (Քեզ համար, Հայաստան) երգը: Մեծ յաջողութիւն գտած այս երգի բառերը գրած է Շառլ Ազնաւուր, իսկ երաժշտութեան հեղինակն է Ճորճ Կառվարենց:

Ամէն տարի, 7 Դեկտեմբերին, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ միլիոնաւոր հայեր կ'ոգեկոչեն Սպիտակի աւերիչ երկրաշարժի զոհերուն յիշատակը:



ՀԱՆՐԻ ՎԵՐՆԷՕՅ



ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ

ՍՊԻՏԱԿ

Սպիտակ քաղաքը կը գտնուի Հայաստանի հանրապետության, Լոռի մարզին մէջ, Երեւանի հիւսիսը: Անոր անկումէն ետք, ան վերահաստատուեցաւ տարբեր շրջանի մը մէջ: Այսօր, ան կը բաղկանայ մօտաւորապէս 11,000 բնակիչներէ: Այս շրջանը անուանուած է «Սպիտակ» մեծ քանակով կրաքար գտնուելուն պատճառով:

Կրաքարը կրային ճերմակ գոյնի քարն է, որ այրելով կիր կը դառնայ (Limestone / Pierre à chaux):

Կաւիճը, որ գրատախտակի վրայ գրելու համար կ'օգտագործենք, կրաքարի շատ կակուղ տեսակն է:



Կրաքար

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Որքան որ փորձես ինծի մօտենալ, կը մնամ հեռու:
2. Ես ունիմ աչք մը, բայց չեմ տեսներ, սուր ոտք մը, բայց չեմ քալեր:
3. Անդադար կը մօտենամ, բայց բնաւ չեմ հասնիր:
4. Քանի մը ժամ կեանք ունիմ, կը ծառայեմ ինքզինքս սպառելով:

Հանելուկներուն պատասխանները.

1. Հորիզոն
2. Ասեղ
3. Վաղը
4. Մոմ:

ՌՎ ԿՈՒԶԷ ԲԱԶՄԱԳԵՏ ԸԼԼԱԼ

Դեկտեմբեր ամսուան հարցումներուն պատասխաններուն ժամկետն է 13 Յունուար 2023-ը: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը, յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montreal, Canada
H4J 1L5

1. Մուղեղ Իշխանի ուսուցիչներէն են.

- Ա. Յակոբ Օշական, Լեւոն Շանթ եւ Նիկոլ Աղբալեան:
- Բ. Յակոբ Մնժուրի, Սիմանթօ եւ Լեւոն Շանթ:
- Գ. Ռաֆֆի, Դանիէլ Վարուժան եւ Նիկոլ Աղբալեան:

2. Ըստ Մուղեղ Իշխանի, ինչո՞ւ ամէն անհատ պէտք է ուսանի եւ բարձրագոյն ուսում ստանայ:

- Ա. որպէսզի շատ դրամ շահի:
- Բ. որպէսզի նախ կարողանայ լաւ մարդ դառնալ, յետոյ՝ օգտակար ըլլայ իր ազգին:
- Գ. որպէսզի տնօրէն ըլլայ:

3. Մուղեղ Իշխանի «ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ» բանաստեղծութեան մէջ, ինչ կ'ուզուի Կաղանդ Պապայէն:

- Ա. Պուպրիկ մը:
- Բ. Օդանաւ մը:
- Գ. Մասիսը:

4. Չոր պտուղին կ'ըսենք նաեւ ...

- Ա. Կարկանդակ
- Բ. Չիր
- Գ. Միրգ

5. Կաղանդի անուշեղէններէն է ...

- Ա. Հանգստապատառը:
- Բ. Բոկեղը:
- Գ. Խոշաֆը:

6. Եղենին մշտադալար է եւ ասեղնատերեւ:

- Ա. Ճիշդ
- Բ. Սխալ

7. Աշխարհի վրայ աւելի քան 40 տեսակ եղենիներ կան, անոնցմէ քանի՞ տեսակը կ'ապրին Հայաստանի մէջ:

- Ա. 2 տեսակը:
- Բ. 10 տեսակը:
- Գ. 4 տեսակը:

8. Երբ տեղի ունեցաւ «Սպիտակ» քաղաքի երկրաշարժը:

- Ա. 7 Դեկտեմբեր 1988-ին:
- Բ. 7 Հոկտեմբեր 1988-ին:
- Գ. 9 Նոյեմբեր 1987-ին:

9. Ովքեր են այն նշանաւոր երկու հայերը, որոնք յաջողեցան երկրաշարժէն ետք՝ համախմբել 90 ֆրանսացի երգիչներ եւ դերասաններ:

- Ա. Սիմոն Աբգարեան եւ Շառլ Ազնաւուր:
- Բ. Հանրի Վերնէյօյ եւ Շառլ Ազնաւուր:
- Գ. Սերժ Աւետիքեան եւ Հանրի Վերնէյօյ:

10. Ինչո՞ւ Լոռի մարզի քաղաքներէն մէկը «Սպիտակ» կոչուած է:

- Ա. Իր լեռները ձիւնով ծածկուած ըլլալուն պատճառով:
- Բ. Իր դաշտերը ճերմակ ծաղիկներով ծածկուած ըլլալուն պատճառով:
- Գ. Մեծ քանակով կրաքար գտնուելուն պատճառով:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757

Email: sylvia@horizonweekly.ca

Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի

Թիւր պատրաստեց Եսենիա Քելլէան

Ձեայղացք՝ Լորի Խաչերեանի